**Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2**

19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-112-01-25
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք.Երևան** **19.12.2025թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2025թ.-ի թիվ Լ-ԵԼ-ՀՓ/261-25 Լիազորագրի հիման վրա, և ՀՀ Բարձրագույն Դատական Խորհրդի աշխատակազմը՝ Դատական դեպարտամենտը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս Դատական դեպարտամենտի ղեկավար Նաիրի Գալստյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-112-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը 138 000 (մեկ հարյուր երեսունութ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-112-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

**Ընկերություն՝**

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 544-444

Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար՝

Գուրգեն Բաղդասարյան

/ստորագրություն/

**Պատվիրատու՝**

Դատական Դեպարտամենտ
ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011192151
Հեռ.՝ (010) 511-776

Ղեկավար՝

Նաիրի Գալստյան

/ստորագրություն/

Գ. Լեբլերյան